

Հ Է Ք Ե Ա Թ



Նորէն այս գիշեր սիրտըս կը հիսէ
Հէֆեաթ մը սիրուն թելերով ոսկի,
Ցայտօք կարօտիս շիթերով լոյսէ,
Արցունքներու պէս լուռ կը փրզըճկի...:

Երկինք մը դիւթիչ հոգիս կամարած,
Կը ջահէ մամբան՝ աստղերով ազու,
Ուր ես կը սպասեմ յոյգերով առկայծ,
Անցքին անցեալիս ինծի այցելու...:

Որքա՛ն քաղցրածոր, որքա՛ն յարգասփիւռ,
Տոգանցքը տենդոտ, հի՛ն հի՛ն օրերուն,
Յարութեան տօնին՝ շքեղանքով բիւր
Խորանին նըման՝ խումկով օրօրուն...:

Ոչ քէնը մարդոց, ոչ կիրքը արեան,
Երանութեանս դէմ կը դաւեն ցաւեր,
Մեծ բեռը կեանքին փոտուրի նըման
Կարծես յաւէտ է ինձմէ հեռացեր...:

Թելը հէֆեաթիս, Տէ՛ր, մի՛ մկրատեր,
Ըլլամ երազ մը անհունէդ մօլար,
Հոգիներէն ներս յոգնած ու անտէր
Յոյսի աստղի պէս քթքեմ սիրավառ...:



Գիշերն է լուսեր, անցեալս ալ մեկնած,
Սիրտըս որքի պէս կը դիտէ հեռուն...
Հեծֆ մը կ'երկարի մամբարդէն անդարձ,
Ինձ պէս վշտակոծ, ինձ պէս մոլորուն...:

ԶԱՐԵՀ ԳԱԶԱԶԵԱՆ

